

«ՎԱԽ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿԱՆ ՄԱՍՈՒՆԻՍ  
(Ջ. ԲՈՒՇ ԿՐՏՆԵՐԻ ԵՎ Բ. ՕԲԱՄԱՅԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Ժամանակակից աշխարհում մարդը գրեթե յուրաքանչյուր օր բազմաթիվ նորություններ է ստանում մամուլից: Մամուլում լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ, որոնք մեծ ազդեցություն են թողնում մարդկանց աշխարհընկալման վրա: Հոդվածը մի հետազոտություն է՝ նվիրված կոնկրետ կարևոր մի խնդրի, երևույթի և ունի հստակ նպատակ՝ տեղեկացնել լսարանին այս կամ այն իրադարձության մասին՝ տանելով վերջինիս նպատակաուղղված գործողության: Հոդվածի հիմնական գործաբանական գործոնը համարվում է լրագրողի մտադրությունը, որը լինում է երկու տեսակի՝ տեղեկատվական (հասցեատիրոջը տեղեկատվություն փոխանցելը) և հաղորդակցական (հասցեատիրոջը տեղեկացնել տեղեկատվական մտադրության մասին) (Стросон 1986: 58): Այսպիսով, երբ հասցեատերը գիտի հաղորդակցական մտադրությունը, նա կարող է ճանաչել նաև տեղեկատվական մտադրությունը, այսինքն՝ այն բովանդակությունը, որը խոսողը պատրաստվում էր փոխանցել հասցեատիրոջը:

Հաղորդակցականից դեպի տեղեկատվական մտադրության անցումը տեղի է ունենում *մեկնաբանման* գործընթացի միջոցով: Մամուլում հասցեատեր է դառնում ընթերցողը, որը տեղեկություն է ստանում այս կամ այն իրադարձության մասին լրագրողի անհատական-գնահատողական եղանակավորման միջոցով և սկսում է ենթագիտակցաբար հավատալ և ընդունել տվյալ տեղեկատվությունը: Մեկնաբանման մեջ լինելով գլխավոր գործող անձ՝ լրագրողն իր վերլուծության մեջ գործ ունի ոչ այնքան իրական, որքան ենթադրվող, վերացական կամ «նպատակաուղղված» հասցեատիրոջ հետ: «*Ենթադրելի հասցեատեր*» է կոչվում այն ընթերցողների կամ ունկնդիրների լսարանը, որի շուրջ հեղինակը կենտրոնացնում է իր ուշադրությունը, այսինքն՝ իր տեքստի առանցքում գտնվում է ընթերցողը: «*Ենթադրելի ընթերցող*» եզրույթն առաջին անգամ հանդիպել է հեղինակավոր գերմանացի գրականագետ Վ. Իգերի մոտ՝ որպես «տեքստի կառուցվածքի» բնութագիր և ընթերցողական իրազդրծում (Демьянков 2003: 116-133): Ընթերցողը ծանոթանում է քաղաքական գործչի ճառին մեկնաբանողի կամ հոդվածագրի միջոցով՝ հիմնվելով տեքստի վերլուծման վրա, որտեղ առկա է հոդվածագրի սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորումը: Հետևաբար, շատ մեծ է հոդվածի հեղինակի դերը, քանի որ

հենց նրա շնորհիվ է ընթերցողը ճանաչում աշխարհը և պատկերացում կազմում տվյալ իրադարձության մասին: Հոդվածագիրն այն օղակն է, որը կապում է քաղաքական գործչին և լայն զանգվածներին: Նա մեկնաբանում է հռետորի ճառերը, ինչպես թարգմանիչն է թարգմանում քաղաքական գործչի խոսքերը:

Քաղաքական հոդվածի նպատակը ոչ թե նկարագրելն է, այլ տեղեկացնելը և համոզելը՝ հասցեատիրոջ մոտ առաջացնելով մտադրություններ, համոզման համար տալով հիմքեր և դրդելով գործողության (Bayley 1993: 104): Լսարանին համոզելու համար քաղաքական գործիչն օգտվում է լեզվական և ոչ լեզվական, ներոտեքստային և արտատեքստային շատ միջոցներից: Համոզման նպատակն է լսարանի մոտ ստեղծել գնահատականների նոր սանդղակ, հաստատուն կարծիքներ, համոզմունքներ, որոնք անհրաժեշտ են հռետորի գործողությունների համար: Հմուտ լրագրողը մեկնաբանում է հռետորի խոսքերը, համոզման գործընթացը տանում է նրբանկատ և հանգիստ կերպով: Կարդալով մամուլի հոդվածը՝ ընթերցողը նախ ընկալում է այն, իսկ հետո տալիս է իր սեփական գնահատականը ներկայացված փաստերին: Բանն այն է, որ ոչ ոք ուղղակիորեն ճնշում չի գործադրում հասցեատիրոջ կարծիքի վրա, նա ազատ է իր տեսակետի ձևավորման մեջ, սակայն վերջինիս կարծիքի ձևավորման մեջ անուղղակիորեն իր դերակատարումն ունի հենց լրագրողը:

Տվյալ հոդվածի նպատակն է բացահայտել, թե ինչպես են լրագրողները լեզվական և ոճական հմարների միջոցով վախի զգացում առաջացնում ընթերցողների մոտ՝ մեկնաբանելով Ջ. Բուշ Կրտսերի և Բ. Օբամայի ելույթները:

Մեկնաբանելով Ջ. Բուշ Կրտսերի՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում տեղի ունեցած հայտնի ելույթը՝ լրագրողը համեմատություններ է անցկացնում Վիետնամի պատերազմի և ահաբեկչության դեմ նախաձեռնվող պայքարի միջև՝ ցույց տալով, նախագահի կողմից առաջ քաշված ահաբեկչության դեմ պատերազմը ընդունելի է լայն զանգվածների շրջանում, քանի որ այն զնալով դառնում է յուրաքանչյուր մարդու պարտականությունը:

“The declaration of war against all terrorism anywhere is becoming a liability. It’s a laudable aim but one that’s clearly beyond us. It may well involve us in a quagmire not unlike the one in Vietnam and obfuscate our war aims—once again, as happened in Vietnam.” (Washington Post)

Washington Post-ում տպագրված այս հոդվածի հենց առաջին իսկ նախադասությունից կարելի է արձանագրել, որ ահաբեկչության դեմ պատերազմ հայտարարելն արդեն փաստ է, և այն տարածվում է ամբողջ աշխարհով մեկ: Դեպքերի շարունակականությունն արտահայտվում է *is becoming* ներկա շարունակական բայաձևով, որով լրագրողը ցույց է տալիս, որ ահաբեկչության դեմ պատերազմ սկսելու գաղափարը այլևս չի պատկանում միայն ԱՄՆ նախագահին: *Anywhere* մակբայը բերելով *is becoming* բայից առաջ և խախտելով

նախադասության շարադասությունը՝ լրագրողն ընդգծում է, որ այն արդեն կայացած փաստ է, քանի որ դուրս է եկել ԱՄՆ-ի տարածքից և գնալով տարածվում է ամենուրեք՝ ամբողջ աշխարհով մեկ: Լրագրողն իր սուբյեկտիվ շեշտադրումն է անում այն բանի վրա, որ նախագահ Ջ. Բուշն արդեն ապացուցել է իր երկրին, որ հարկավոր է անհապաղ պատերազմ սկսել ահաբեկչության դեմ, իսկ *is becoming* ներկա շարունակական բայածևի և *anywhere* մակբայի միջոցով էլ ցույց է տալիս, որ արդեն աշխարհի համար այն կամաց-կամաց դառնում է յուրաքանչյուրի պարտքը և ինչու չէ՝ նաև պարտականությունը: Ընթերցողին չի մնում այլ ելք, քան ընդունել լրագրողի «օբյեկտիվ» ճշմարտությունը:

Ընթերցողը տեղեկանում է լրագրողի՝ նախագահի ելույթի նկատմամբ դրական տրամադրվածության վերաբերյալ հաջորդ նախադասության մեջ, որտեղ հողվածագիրը հանգամանորեն ներկայացնում է նախագահի նպատակը որպես գովասանքի արժանի արարք՝ *it is a laudable aim but one that's clearly beyond us*: Փաստորեն, լրագրողը գովում է նախագահի քայլերը, սակայն միևնույն ժամանակ ցույց տալիս, որ ամերիկացիների համար դա կարող է անընդունելի լինել, քանի որ թարմ են Վիետնամի պատերազմի հիշողությունները: *Beyond us* խոսքային միավորի միջոցով լրագրողը ցույց է տալիս, որ թեև իր ժողովրդի հասկացությունից վեր է և բավականին բարդ գովաբանել և արժևորել նախագահի գործողությունները, այնուամենայնիվ, ըստ նրա, ամերիկացիները պետք է հավատան, որ այդ ռազմական գործողությունները կարճատև բնույթ են ունենալու և անպայմանորեն հանգեցնելու են խաղաղության, ուստի և հարկավոր չէ վախենալ, այսինքն՝ լրագրողը անուղղակիորեն ներազդում է իր ընթերցողի բանականության վրա՝ ձևավորելով դրական մոտեցում նախագահի ելույթին և հավաստիացնելով, որ տվյալ պատերազմից հետո հաստատվելու է խաղաղություն: Հենց այդ գաղափարն է, որ փորձում է լրագրողը փոխանցել իր ընթերցողին՝ ցույց տալով, որ թեև ինքն էլ է համամիտ հասարակական կարծիքի հետ, բայց հարկավոր է հնարավորություն ընձեռել նախագահին իրականացնելու իր «դրական» նպատակները: Կարելի է ակնհայտորեն տեսնել, թե ինչպես է լրագրողը մանիպուլացիայի ենթարկում ընթերցողին՝ ձևավորելով ու կազմավորելով աշխարհի ճանաչողական պատկերը և ստիպելով ժողովրդին իր աչքերով մայել Ջ. Բուշի ելույթին:

Շարունակելով համեմատությունը Վիետնամի պատերազմի և առաջիկայում սկիզբ առնող հակամարտության հետ՝ լրագրողը գործածում է *well* մակբայը, որպեսզի խոսքին հաղորդի հուզարտահայտչական երանգ՝ չբացառելով նաև այն փաստը, որ միանգամայն հնարավոր է մեկ անգամ ևս կրկնվի Վիետնամի դաժան օրերը: Պետք է նշել, որ *well* մակբայը այստեղ կորցրել է իր առաջնային «լավ» իմաստը և օգտագործվել է իր երկրորդական ու նաև երրորդական բառարանային իմաստներով՝ «հիմնավորապես, միանգամայն, բավա-

կանաչափ, զգալիորեն»: Իր խոսքն ավելի հուզական և դիպուկ դարձնելու նպատակով լրագրողը դիտմամբ խախտում է նախադասության շարահայտական կառուցվածքը՝ *well* մակբայը բերելով *involve* բայից առաջ, որի միջոցով ցանկանում է կենտրոնացնել ընթերցողի ուշադրությունը այն փաստի վրա, որ շատ հնարավոր է, որ նախագահի քայլերը հանգեցնեն պատերազմի, որը ոչնչով չտարբերվի Վիետնամի պատերազմից: Ինչ վերաբերվում է *quagmire* գոյականին, ապա պետք է նշել, որ այն գործածվել է ոչ միայն իր ուղիղ իմաստով՝ «ճահիճ», այլև այս համատեքստում ձեռք է բերել փոխաբերական իմաստ՝ «անելանելի իրավիճակ»: Լրագրողը սրանով փորձում է ցույց տալ, որ նախագահի կողմից առաջ քաշվող հակամարտությունը հնարավոր է ոչ միայն Վիետնամի պատերազմի պես երկիրը մխրճի ճահիճ մեջ, այլև ամերիկացիները կրկին անգամ հայտնվեն այն նույն անելանելի իրավիճակի մեջ, ինչպիսին տարիներ առաջ էր: Փաստորեն, կարելի է նշել, որ լրագրողը գործածել է *quagmire* գոյականը՝ շեշտելու, որ ողջ աշխարհն է այժմ հայտնվել ճահիճ մեջ ահաբեկչության պատճառով, իսկ այդ իրավիճակից վերջնականապես դուրս գալու միակ ճանապարհը հակամարտելն է:

Շատ հետաքրքիր է լրագրողի կողմից *aim* գոյականի երկակի գործածությունը: Սկզբում այն դրական իմաստ ունի՝ *it is a laudable aim*, այնուհետև բացասական՝ *obfuscate our war aims*: Լրագրողը նշում է, որ նախագահի քայլերը իրոք արժանի են գովասանքի, սակայն միևնույն ժամանակ ի չիք են դառնում այդ նպատակները, ինչպես պատահեց Վիետնամի պատերազմի ժամանակ. Նա նշում է, որ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում այդ ժամանակվա նախագահի քաղաքականության հետ, բայց ամեն ինչ վատ ավարտ ունեցավ: Ըստ լրագրողի՝ այժմ կրկին միևնույն դրության մեջ են իրենք, և հարկավոր է լավատեսական մոտեցում ունենալ ու քաջալերել նախագահին: Նա իր պարտքն է համարում ամեն կերպ իր ընթերցողին տեղեկացնել և նախապատրաստել ղեպքերի հնարավոր ընթացքին: Հարկ է ընդգծել, որ *not unlike the one in Vietnam & as happened in Vietnam* խոսքային միավորները այս համատեքստում ձեռք են բերել իմաստաբանական հոմանիշների կարգավիճակ, քանի որ երկուսն էլ համեմատություն են անցկացնում Վիետնամի պատերազմի և նախագահ 2. Բուշ Կրտսերի վարած քաղաքականության միջև, որոնց չնորիչվ պարզ է դառնում, որ լրագրողը գրեթե համոզված է, որ կրկնվելու են Վիետնամի ղեպքերը, բայց այդուհանդերձ այլ հնար չկա:

Կարելի է արձանագրել, որ 2. Բուշ Կրտսերի ելույթի վերլուծությունից հետո ընթերցողի մոտ վախի զգացում չի առաջանում, քանի որ լրագրողն ամեն կերպ փորձում է արդարացնել նախագահի քայլերը և ցույց տալ, որ դրանից հետո խաղաղություն է հաստատվելու: Մի փոքր այլ է իրավիճակը Թ. Օրամայի պարագայում: Վերջինիս 2009թ. նոյեմբան խաղաղության մրցանակ չնորիչվեց

«ժողովուրդների համագործակցության և միջազգային դիվանագիտության հզորացմանն ուղղված իր արտասովոր ջանքերի համար» ընդամենը 9 ամիս նախագահությունից հետո: Բազում հոդվածներ ու հրապարակումներ են լույս տեսել ամերիկյան և համաշխարհային մամուլում, որտեղ կարելի է տեսնել, թե ինչպես են լրագրողները քննադատում կամ գովեստի արժանացնում Բ. Օբամայի՝ նորեկյան մրցանակ շնորհելու փաստը:

Դիտարկենք The Huffington Post-ում տպագրված Բեն Ֆելլերի հոդվածից մի հատված, որտեղ կարելի է տեսնել հոդվածի հեղինակի հաղորդակցական և տեղեկատվական մտադրությունները.

**“Barack Obama managed to confront the irony of receiving the award during wartime. The president delivered a robust defence of war “while acknowledging his own few accomplishments”.**

**“Obama refused to renounce war for his nation or under his leadership, saying defiantly that ‘I face the world as it is and I am obliged to protect and defend the United States,’” (Ben Feller, The Huffington Post, 10 December 2009)**

Հոդվածի այս հատվածը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը պարունակում է տեղեկատվական մտադրություն, որտեղ առաջին հայացքից նորություն քվազող հեղինակի գաղափարները իրականում հայտնի են բոլորին, քանի որ այդ մասին խոսվել է զանգվածային լրատվական միջոցներում: Երկրորդ մասում հոդվածագիրը մեջբերումներ է անում նախագահի ելույթից՝ հիմնավորելով իր մտքերի ճշմարտացիությունը. ընթերցողին մասնակից դարձնելով իր գաղափարներին և ստիպելով վերջինիս հակազդել հռետորի կողմից արտաբերված խոսքերին: Երկրորդ հատվածը կարելի է համարել հաղորդակցական, քանի որ ըստ էության այն չեզոք է և կախված չէ հռետորի կամ լրագրողի մեկնաբանությունից, բայց այդ չեզոքությունը լի է օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատողական հագեցվածությամբ: Օբյեկտիվ է, քանի որ այստեղ բացակայում է հոդվածագրի կարծիքը, մոտեցումը, ու վերջինս պարզապես մեջբերում է անուն հռետորի հայտնի ելույթից: Այդուհանդերձ, տվյալ մեջբերումը հագեցված է սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորմամբ, քանի որ հռետորի մեջբերված նախադասությամբ Բեն Ֆելլերը ցույց է տալիս իր տեղեկատվական մտադրության ճշմարտացիությունը: Տվյալ մեջբերումը օգնում է հոդվածագրին իր մտքերը հստակ և ընթացիկ դարձնելու համար, իսկ ընթերցողը հասկանում և ամմիջապես ընդունում է լրագրողի խոսքերը, քանի որ հաղորդակցական մտադրությունից է անցում կատարվել դեպի տեղեկատվական մտադրություն:

Հոդվածի որոշ հատվածներ՝ The president delivered a robust defence of war; Obama refused to renounce war for his nation or under his leadership. Կարող են մեծ ներգործություն ունենալ լսարանի վրա՝ նախապես որոշակի

տրամադրություն հաղորդելով վերջինիս: Ընթերցողը, կարդալով հեղինակի այս մտքերը, ակամայից մոլորվում է և չի հասկանում, թե ինչպես կարող է «պատերազմի ամուր պաշտպանություն» – «robust defence of war» իրականացնող մարդը ստանալ նորեկան մրցանակ: Հարկ է նշել, որ այստեղ **robust** ածականը գործածվել է բառարաններում անկա երկրորդ իմաստով՝ «ամուր»: Դրանով Բեն Ֆելլերը ցույց է տալիս Բ. Օբամայի ամուր վճռականությունը պատերազմի պաշտպանության հարցում: Հոդվածագրի մեկնաբանությունը հենց այն հաղորդակցական մտադրությունն է, որը դառնում է այսպես կոչված «միջնորդ» կամ «կամուրջ» ընթերցողի և հոետորի միջև, և որի շնորհիվ ընթերցողը սկսում է ինքնուրույն դատողություններ անել և ցույց տալ իր վերաբերմունքը տվյալ իրադարձությանը: Բանն այն է, որ հոդվածի հեղինակը չի պարտադրում իր ընթերցողին ընդունելու իր տեսակետը, նա ընդամենը տեղեկացնում է և հաղորդում իր ներքին հույզերն ու կարծիքը:

Հիմնավորելով իր մեկնաբանությունը մեջբերման միջոցով՝ **"I face the world as it is"**, հոդվածագիրը իր լսարանից կարծես աջակցություն է հայցում, որպեսզի ապացուցի իր գաղափարների հավաստի լինելը: Նա դրանով ասես «բաց է անում ընթերցողների աչքերը»՝ ցույց տալով, որ նախագահը դիմագրավում է աշխարհի բոլոր սպառնալիքներին այնպես, ինչպես այն իրականում կա: Հետևաբար, Բ. Օբաման չի կարող լինել խաղաղության ջատագով՝ հաշվի առնելով աշխարհի և մասնավորապես ԱՄՆ-ի շուրջ ստեղծված պատերազմի վտանգով լի իրավիճակները: Լրագրողն այս մեջբերմամբ փորձում է բոլորին ասել, որ խաղաղության համար մարտնչող մարդը՝ Բ. Օբաման, պատրաստ է ոչնչի առջև կանգ չառնել, անգամ՝ պատերազմի, միայն թե հասնի իր նպատակին: Հենց այս «խաղաղության» տակ էլ իրականում թաքնված է պատերազմը, որն ընթերցողների շրջանում վախ է առաջացնում: Լրագրողը նախագահի խոսքերը մեջբերելուց բացի նաև գործածում է փոխաբերություն՝ ցույց տալու Բ. Օբամայի՝ պատերազմ սկսելու պատրաստականությունը: Այսպես **"robust defence of war"** – «պատերազմի ամուր պաշտպանություն» արտահայտության միջոցով լրագրողն ասես ընթերցողի «աչքերը բաց է անում»՝ ցույց տալով, որ Բ. Օբաման ոչ թե խաղաղության, այլ պատերազմի կողմնակից է, քանի որ նա պաշտպանում է պատերազմի գաղափարը, այլ ոչ թե խաղաղության, ինչի համար ինքը նորեկան մրցանակ էր ստացել: Հետաքրքիրն այն է, որ լրագրողն իր սուբյեկտիվ գնահատողական եղանակավորման միջոցով ընթերցողի մոտ անուղղակիորեն ձևավորում է բացասական մոտեցում Բ. Օբամայի վարած քաղաքականության նկատմամբ: Նա դրանով ցույց է տալիս, որ թեև Բ. Օբամային շնորհվեց խաղաղության համաշխարհային մրցանակ, վերջինս բոլորովին խաղաղության ուղղությամբ դեռևս ոչ մի քայլ չի կատարել և

պատրաստ է իր երկիրը պաշտպանելու պատրվակով ամեն զնով պատերազմ սկսել (*I am obliged to protect and defend the United States*):

Փաստորեն, ստացվում է, որ նորբեյյան մրցանակ շնորհում են մի մարդու, որը պատերազմի ջատագով է և երկիրը կրկին անգամ տանում է ռազմական գործողությունների: Սակայն, երբ ընթերցողը զուգահեռականներ է անցկացնում Ջ. Բուշ Կրտսերի և Բ. Օբամայի միջև, նա տեսնում է, որ նախորդ նախագահի օրոք ԱՄՆ-ի ժողովրդի մի ստվար զանգված կոզմ էր ահաբեկչության դեմ ռազմական գործողություններ սկսելուն, քանի որ ամերիկացիների սրտերում դեռ թարմ էին 2001թ. սեպտեմբերի դեպքերը: Նրանք հավատում էին Ջ. Բուշի այն հավաստիացումներին, որ տվյալ պայքարից հետո անպայման խաղաղություն է հաստատվելու: Նույնը չի կարելի ասել Բ. Օբամայի համար: Վերջինիս օրոք ոչ ոք չէր հարծակվել ԱՄՆ-ի վրա, որպեսզի նրանք էլ հակահարված տալին: Սիա հենց այս շրջանակում է անհասկանալի դառնում լրագրողի կողմից գործածված *robust defence of war* արտահայտությունը: Հենց սա պատճառ է դառնում, որ հասարակությունը սկսի վախենալ և կանխազգալ, որ նախագահի վարած քաղաքականությունը հնարավոր է հանգեցնի պատերազմի: Ակնհայտ է, որ «վախ» հասկացույթը ծնալիորվում է Բ. Օբամայի ելույթի ժամանակ, քանի որ վերջինս «խաղաղության» ներքո պաշտպանում է «պատերազմի» անհրաժեշտությունը, որն էլ շփոթմունքի մեջ է գցում հասարակ ամերիկացուն:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Демьянков В. Интерпретация политического дискурса в СМИ // Язык СМИ как объект междисциплинарного исследования: Изд-во Московского государственного университета им. М. В. Ломоносова, М., 2003.
2. Стросон П. Намерение и конвенция в речевых актах // Новое в зарубежной лингвистике: Прогресс, М., 1986.
3. Bayley P. & Miller, D. Texts and Contexts of the American Dream: a Social Semiotic Study of Political Language, Bologna: Pitagora, 1993.

#### Means of Actualization of the Concept "Fear" in Modern American Press

The paper attempts to reveal the means of actualization of the concept "fear" in G. W. Bush and B. Obama's famous speeches. Linguistic analysis of the journalists has shown that B. Obama is not a peace supporter at all for what he was awarded a Nobel Prize. Due to semantic/cognitive review of press analysis, it becomes clear that B. Obama is considered a supporter of military actions. The subjective modality of the journalists makes the readers feel an uncertainty and fear towards the president's policy.